

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԽՐԱՏԻ՝ «ՄԱՏԵՆԱԳԻՐՔ
ՀԱՅՈՑ»-ՈՒՄ ՈՐՊԷՍ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ
ՏՊԱԳՐԵԼՈՒ ՇՈՒՐՋ

Վանո Եղիազարեան

Հայագիտութեան մէջ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատին անդրադարձել են Յ. Շրէօզերը¹, Յ. Նալեանը², Հ. Զօհրաբեանը³, Ս. Սոմալը⁴, Մ. Զամչեանը⁵, «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի հեղինակներ Գ. Աւետիքեանը, Խ. Սիւրմէլեանը, Մ. Աւգերեանը⁶, Գ. Զարբհանալեանը⁷, ինչպէս նաեւ՝ Ե. Դուրեանը⁸, Բ. Սարգիսեանը⁹, Մ. Օրմանեանը¹⁰, Հ. Աճա-

ռեանը¹¹, Ն. Պողարեանը¹², Յ. Անասեանը¹³, Ս. Ստամբուլցեանը¹⁴, Յ. Քէօսէեանը¹⁵, Պ. Խաչատրեանը¹⁶, Ն. եպս. Ալեքսէ-զեանը¹⁷, Հ. Միրզոյեանը¹⁸, Հ. Թամրազեանը¹⁹, Թ. Մինասեանը²⁰ եւ այլք:

1 Տե՛ս Արամեան լեզուի գանձ կամ Joh. Joachimi Schroderi, Thesaurus linguae Armenicae, antiquae et hodiernae, Amstelodami, MDCCXI (1711):
2 Տե՛ս Գիրք աղօթից արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի, Կոստանդնուպոլիս, 1763, էջ 460-462, նաեւ՝ Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1872, էջ 460-462:
3 Տե՛ս Հ. Սահակ վրդ. Ծմնմանեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, Վեներտիկ, հտ. 2, 1996, էջ 599:
4 Տե՛ս Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վաճառի վանականի Մատենադարանին, Վեներտիկ, 1840, էջ 483:
5 Տե՛ս Մ. Զամչեան, Հայոց պատմութիւն, հտ. Բ, Երեւան, 1984, էջ 853:
6 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 1, Վեներտիկ, 1836, էջ 10-11:
7 Տե՛ս Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեանց ի պէտս ուսման ազգային վարժարանաց, հտ. Ա, Վեներտիկ, 1865, էջ 447:
8 Տե՛ս Ե. Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 172:
9 Տե՛ս Բ. Սարգիսեան, Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւնը թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու, աշխատ. եւ ծանօթագրութեանք ի լոյս ընծայեալ Հայր Բարսեղ Սարգիսեանէ, Վեներտիկ, 1907, էջ ԾԿ:
10 Տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատմութիւն, հտ. Ա, Էջմիածին, 2001, էջ 1379:

11 Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, Երեւան, 1942, էջ 543:
12 Տե՛ս Ն. Պողարեան, Հայ գրողներ, Ե-ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 273:
13 Տե՛ս Յ. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ, Երեւան, 1976, էջ 284:
14 Տե՛ս Սր. Գրիգոր Նարեկացի, Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինաւոր վարքի մասին, աշխարհաբարի վերածեց Ս. Ստամբուլցեանը, Գանձասար, 1992, թիւ Ա, էջ 165-176, նոյնը նաեւ «Գանձասար» մատենաշար, Երեւան, 1992:
15 Տե՛ս «Գանձասար» մատենաշար, Երեւան, 1992, Յ. Քէօսէեանի նախաբանը:
16 Տե՛ս Պ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացուն վերագրուած մի երկի հեղինակային պատկանելութեան մասին, «Բազմավէպ», 1994, ԾԾԲ, էջ 437-449, նաեւ նոյնի, Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, Էջմիածին, 1996, էջ 137-150, նաեւ Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, աշխատասիրութեամբ Պողոս Խաչատրեանի եւ Յակոբ Քէօսէեանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 447:
17 Տե՛ս Սր. Գրիգոր Նարեկացի, Խրատ ուղիղ հաւատքի եւ առաքինի մաքուր վարքի, թարգմանութիւն եւ ուսումնասիրութիւն Ն. եպս. Ալեքսէզեան, Անթիլիաս, 2002:
18 Տե՛ս Հ. Միրզոյեան, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգութեան հարցի շուրջ, «Բանբեր Երեւանի համալսարանի», 2004, թիւ 1, էջ 67-84.
19 Տե՛ս Հ. Միրզոյեան, Նարեկացիագիտական հետազոտութիւններ, Երեւան, 2010, նաեւ նոյնի, Գրիգոր Նարեկացու «Համառատիք բան խրատութիւնը», «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԲ, էջ 1009-1021:
20 Տե՛ս Հ. Թամրազեան, Գրիգոր Նարեկացին եւ նորայտոնականութիւնը, Երեւան, 2004, էջ 76-91, 396-402, նաեւ նոյնի, Գրիգոր Նարեկացին եւ

Ի դէպ, Ա. Ղազինեանը, խօսելով Նարեկացու երկերի ժանրային բնութագրի մասին, չի յիշատակում առհասարակ խրատի ժանրը եւ խնդրոյ առարկայ երկը, ինչից էլ պարզ է դառնում, որ անուանի նարեկացիագէտն այս խրատը չի համարել Նարեկացու ստեղծագործութիւնը²¹:

Սոյն յօդուածի արդիականութիւնը Գրիգոր Նարեկացու երկերի շարքում խնդրոյ առարկայ խրատի անհիմն կերպով ներառելու եւ գիտական հրատարակութեամբ որպէս նրա ստեղծագործութիւն անքննադատ տպագրելու գիտական վարկածի առաջադրում-հիմնադրումն է: Մեր նպատակն է ընդգծել, որ «Մատենագիրք Հայոց» հեղինակաւոր մատենաշարում որպէս Նարեկացու ստեղծագործութիւն տպագրուել է Հայագիտութեան մէջ վիճելի համարուող խրատը:

Ուսումնասիրութեան խնդրոյ առարկան միջնադարեան ձեռագրերով մեզ հասած «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատի հեղինակի հարցն է:

Յօդուածի գիտական մեթոդաբանութիւնը Հայագիտութեան մէջ եղած կարծիքների եւ ձեռագրական փաստերի համադրում-վերլուծումն է, իսկ մասնագիտական մեթոդներից կիրառուել են պատմական, պատմա-համեմատական մեթոդները:

Առհասարակ միջնադարեան երկերի հեղինակների որոշման հարցում կարեւոր են նախ եւ առաջ ձեռագրական փաստերը: Նարեկացուն վերագրուած խրատի ձեռագրերի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ

Նարեկեան դպրոցը (Բնագրագիտական հետազոտութիւններ), Գիրք Ա, Երեւան, 2013, էջ 216-233:
20 Տե՛ս Թ. Մինասեան, Վարդան դիւանադարի ինքնութեան խնդրի շուրջ, Էջմիածին, 2006, թիւ Ե, էջ 27-33:
21 Տե՛ս Ա. Ղազինեան, Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 100-107:

Հնագոյն ձեռագրերում որպէս այս խրատի հեղինակ Գրիգոր Նարեկացին չի յիշատակուում: Հնագոյն ձեռագիրը Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 1324 ձեռագիրն է, գրչութեան ժամանակը՝ 1281 թ., վայրը՝ Հաղպատ, որտեղ խրատն ունի «Բան համառատ վասն ուղիղ հաւատոյ» վերնագիրը: Յաջորդ ձեռագիրը թիւ 581, գրչագրուած է 1371 թ., եւ 20 տարի անց՝ 1391 թ. արտագրուած թիւ 2178 ձեռագրում խրատի հեղինակը յստակ համարուում է Գրիգոր Սկեւոսցին. «Դաւանութիւն Գրիգոր վարդապետի Սկեւոսցոյ ասացեալ»:

Ձեռագրական քննութեան հիման վրայ պարզուել է, որ նշուած խրատը Գր. Նարեկացու անուան հետ է կապուել շատ ակնթի ուշ՝ ԺԷ դարից. «ԺԷ դարից սկսած՝ ձեռագրերում «խրատը» վերագրուել է Գրիգոր Նարեկացուն»²²:

Այժմ անդրադարձ կատարենք խնդրոյ առարկայ խրատի տպագրութեան ակնադրոյթին: Առաջին անգամ խրատը 1711 թ. հատուածաբար տպագրել է Յ. Շրէօզերը, ինչի մասին Թ. Մինասեանն իրաւացիօրէն նկատել է, որ ԺԷ դարի ձեռագրական վերագրումների «հիման վրայ էլ գերմանացի հայագէտ Յոհան Շրէօզերը «Արամեան լեզուի դանձ» (Ամստերդամ, 1711 թ.) աշխատութեան մէջ «խրատը» հատուածաբար տպագրել է որպէս Գր. Նարեկացու ստեղծագործութիւն»²³:

Խրատի ամբողջական բնագիրն առաջին անգամ 1763 թ. տպագրուել է Գր. Նարեկացու երկերի շարքում²⁴, որտեղ Յ. Նալեանը գետեղել է նաեւ մի փոքրիկ առաջաբան՝ «Ծանուցումն առ Աստուածասէր եւ ընթերցասէր անձինսը» վերնագրով: Այստեղ որպէս խրատի պատուիրատու յի-

22 Թ. Մինասեան, նշ. աշխ., էջ 27:
23 Նոյն տեղում, էջ 28:
24 Տե՛ս Գիրք աղօթից արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետի, էջ 463-526:

չատակում է «Վարդանայ Դիւանադարին Սենեքերիմայ Արծրունեաց արքայի՝ արքունական հրովարտակաց գծագրողին»²⁵: Սակայն հարկ է փաստել, որ Յ. Նալեանը չի յիշատակում որեւէ պատմական սկզբնաղբիւր Վարդան դիւանադարի մասին²⁶:

25 Նոյն տեղում, էջ 460:

26 Վարդան դիւանադարի մասին Հ. Աճառեանը գրում է. «Վարդան դիւանադար. եղբայր Գրիգոր Նարեկացու (+1003 թ.): Չամչեան Բ. 853 համարում է Սենեքերիմ թագաւորի դիւանադարը. Նարեկացու եղբայրը լինելու մասին տե՛ս Բ. Սարգիսեան, Եւագր. Ներած. էջ 66, հակառակը՝ Ջարթ. Հին դար. 584. —տե՛ս. Վարդանայ՝ Գր. Նար. Մատ. էջ 483, տե՛ս նաեւ Տաշեան, Յուգ. 134» (Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 5, Երեւան, 1962, էջ 79): Ինչպէս պարզ տեսանելի է հէ՛նց Հ. Աճառեանի բառայօդուածից, Վարդան դիւանադարը չի վկայում որեւէ պատմական սկզբնաղբիւրով: Դա շրջանառութեան մէջ է դրուել Յ. Նալեանի կողմից, որից էլ 1785 թ. օգտուել է Մ. Չամչեանը: Իսկ աւելի ուշ Բ. Սարգիսեանն այս Վարդանին համարել է Նարեկացու եղբայր, ինչի մասին Պ. Խաչատրեանն իրաւամբ գրում է. «Ինչ խօսք, Յ. Նալեանից մինչեւ Աճառեան ձգուող այդ հաւաստումը ճշմարտութեան ուժ կ'ունենար եւ հիմք կը ծառայէր Խրատը Նարեկացուն համարելու, եթէ պատմական գուցահետ որեւէ վկայութիւն լինէր այն մասին, որ Նարեկացին իսկապէս Վարդան անունով եղբայր է ունեցել: Նրա վարքի ոչ մի խմբագրութեան մէջ եւ ոչ էլ նրան յիշատակող մատենագիրներից գէթ մէկի մօտ այդպիսի տեղեկութիւն չկայ» (Պ. Խաչատրեան, Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 142): Ի դէպ, Նարեկացու Վարդան անունով եղբոր գոյութիւնը չեն ընդունել նաեւ Գ. Ջարթագաւեանը, Ե. Դուրեանը, ուստի վերջիններս «Խրատը» այդ հիմքով չեն համարել Գր. Նարեկացուն: Վարդան դիւանադարի որոնման այլ վարկածներ եւս առաջադրուել են, որոնց մասին գրել է Պ. Խաչատրեանը: Դրանցից մէկը Մատենադարանի թիւ 3082 ձեռագրում 1267 թ. Վարդան Արեւելցու աշակերտ Գեւորգ Լամբրոնացու ձեռքով գրուած յիշատակարանում հանդիպող Գրիգորի եղբայր Վարդանի անունն է, սակայն այդ Վարդանը Բջնոյ եպիսկոպոս է, ոչ թէ դիւանադար, որով էլ Պ. Խաչատրեանը լուծուած է համարում այդ հարցը: Պ. Խաչատրեանն առաջարկել է նոր վարկած՝ Վարդան Հայկազնի, որն առանել համոզիչ է թուում, մանաւանդ «Տաղ գերեզմանական» ում Վարդան Հայկազնը իրեն «հարազատն» է համարում Գրիգոր Վկայասէրին (Պ. Խաչատրեան, Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 147-

Այս ամէնից յետոյ էլ «Հ. Ջօհրապեանը, 1794 թ. նոյն երկը ընդօրինակելով Կ. Պոլսի պատրիարքարանի թիւ 87 գրչագրից, նկատել եւ կասկածի տակ է առել «Խրատի» Գր. Նարեկացու հեղինակութիւն լինելը եւ թէաբար այն վերագրել է նրա անուանակից Գր. Սկեւոսցուն»²⁷:

1836 թ. «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները՝ Գ. Աւետիքեանը, Խ. Սիւրմէլեանը, Մ. Աւգերեանը, իրենց կազմած մատենանների եւ մատենագիրների ցուցակում այս գործի մասին նշում են. «Այն է հրահանգք հաւատոյ եւ բարի վարուց՝ միջակ եւ ընտիր ոճով եւ գեղեցիկ կարգաբանութեամբ. զոր իրաւամբք ոմանք դասեն 'ի կարգի Նարեկի, եւ այլք տարտամ թողուն զմականունն, եւ ոչինչ անյարմար դատին Գրիգորի Սկեւոսցոյ, մանաւանդ զի յստակ զանազանութիւն անուանց առաքինութեանց եւ մոլութեանց յայտ առնէ զմատենագիրն թարթափեալ եւ 'ի գիրս այլոց ազգաց: Բայց այսր ամենայնի վերայ՝ առաւել Նարեկացոյն է անկ գործս: Գործ էր գտանել, թէ ո՞ր իցէ եւ որում ժամանակի Վարդան դիւանադարին, որ եղել ինչդրող գե-

148): Սակայն, փաստեմք, որ ոչ մի ձեռագիր խրատը Գրիգոր Վկայասէրին չի ընծայում: Հակառակ այս փաստի՝ Թ. Միմասեանը երկու ձեռագրերի հիմամ վրայ խրատը համարում է Գրիգոր Սկեւոսցունը: Այս վարկածն առաջադրել է Ն. Պողարեանը, պաշտպանել են Յ. Բէօսէեանը, Թ. Միմասեանը: Իսկ Թ. Միմասեանը Վարդան դիւանադարին նույնացնում է Վարդան Արեւելցու հետ, ինչը որեւէ կերպ փաստարկուած չէ, այլ մնում է զուտ ենթադրութեան մակարդակում: Հարկ է նշել, որ Գրիգոր Վկայասէրի եւ Վարդան Հայկազնի վարկածը տրամաբանորէն համոզիչ եւ փաստարկուած է, սակայն հնութեամբ երկրորդ եւ երրորդ ձեռագրերը Սկեւոսցունն են համարում խրատը: Ուստի առայժմ ձեռնպահ ենք մնում այդ երկու վարկածներից որեւէ մէկին առաջնութիւն տալուց, մինչեւ կը յայտնուեն նոր ձեռագրական կամ պատմական փաստարկներ:

27 Թ. Միմասեան, ԱԶ. աշխ., էջ 28:

ղեցիկ վարդապետութեան»²⁸: Նկատենք, որ վերոյիշեալ բառարանի հեղինակներից մէկն էլ նարեկացիաբանութեան մեծ երախտաւոր Գաբրիէլ Աւետիքեանն է, որ մինչ այդ տպագրել էր «Նարեկուծը»²⁹:

Խրատը տեղ է գտել նաեւ 1774, 1782, 1802 թուականների տպագրերում: 1840 թ. Սուքիաս Սոմալը թէեւ «Խրատը» տպագրել է Նարեկացու գրքի վերջում³⁰, սակայն, ինչպէս նկատել է նաեւ Թ. Միմասեանը, «Բազմավաստակ Հայագէտը տողատակի ծանօթագրութեան մէջ կասկածի է ենթարկել Գր. Նարեկացու հեղինակութեան խնդիրը՝ պատճառաբանելով, որ նախ՝ Նարեկացու Յայսմաւուրջային վարքում, ուր մէկ առ մէկ թուարկուած են նրա երկերը, «Խրատը» չի յիշատակուում, եւ ապա՝ «Խրատը» իր ոճով խորթ է Նարեկացուն եւ հարազատ է Գր. Սկեւոսցու «Աղօթագրքի» ոճին»³¹: Սակայն Պ. Խաչատրեանը նկատում է, որ «Հայր Սոմալն անհետեւողական եզրակացութեան է յանգել, թէ ինքը չի Համարձակուում այդ գործն անհարազատ Համարել Նարեկացուն՝ վերջնական վճիռը թողնելով ստուգագոյն գրաւոր ապացոյցների, որոնք իր ձեռքին չունի»³²: Սուքիաս Սոմալի այս տպագրութիւնից 1856 թ. եւս «Խրատը» տպագրուել է Երուսաղէմում³³, որից յետոյ շուրջ 100 տարի այն չի տպագրուել: 1954

28 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 1, Վեներտիկ, 1836, էջ 10-11:
29 Տե՛ս Գ. Աւետիքեան, Նարեկ աղօթից, Ս. Ղազար, Վեներտիկ, 1801, նաեւ նոյնի, Նարեկ աղօթից, Ս. Ղազար, Վեներտիկ, 1827:
30 Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, էջ 483-533:
31 Թ. Միմասեան, ԱԶ. աշխ., էջ 28:
32 Պ. Խաչատրեան, Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 139:
33 Տե՛ս Ծառք եւ խնամակցութիւնը հաւատոյ արարեալ սրբոց հարց մերոց Գրիգորի Նարեկացոյն եւ Վահրամայ վարդապետի, Երուսաղէմ, 1856, էջ 1-114:

թ. տպագրուել է Ստամբուլում³⁴, իսկ 2002 թ. Անթիլիասում՝ աշխարհաբար փոխադրութիւնը³⁵, ապա նաեւ 2003 թ. Անթիլիասում՝ գրաբարը³⁶ եւ Նոր Զուղայում³⁷:

2011 թ. վիճելի Համարուող «Խրատը» անհիմն կերպով տպագրուել է Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնների շարքում՝ որպէս հաստատապէս Նարեկացու ստեղծագործութիւն³⁸, եւ դա այն դէպքում, երբ Պ. Խաչատրեանը այն Համարել է Գրիգոր Մագիստրոսի որդի Գրիգոր Վկայասէր կաթողիկոսի, իսկ Ն. Պողարեանը, Յ. Անասեանը, Յ. Բէօսէեանը, Թ. Միմասեանը՝ Գրիգոր Սկեւոսցու ստեղծագործութիւնը:

Մինչ Հ. Միրզոյեանի յօդուածին եւ «Մատենագիրք Հայոց»-ի «Հիմնաւորումաւորաբանին» անդրադառնալը հարկ ենք Համարում պատմական մի Հայեացք գցել նաեւ Հայագիտութեան մէջ այս երկի մասին եղած այլ կարծիքներին: Այսպէս՝ Մ. Չամչեանը, օգտուելով Յ. Նալեանի տպագրութիւնից, գրում է. «Արար դարձեալ եւ հրահանգութիւն հաւատոյ եւ վարուց 'ի խնդրոյ ազգականին իւրոյ Վարդանայ՝ որ էր դիւանադար Սենեքերիմայ արքային Արծրունեաց»³⁹:

Գ. Ջարթագաւեանը գրում է. «Ոմանք ալ կարծեցին թէ Գրիգորի Սկեւոսցոյ կամ Լամբրոնացոյ աշխատասիրածն

34 Տե՛ս Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոգետորի, տպագրեալ արդեամբ՝ Գ. Գուլումեանի, Իսթամպուլ, 1954:
35 Տե՛ս Սր. Գրիգոր Նարեկացի, Խրատ ողիղ հաւատքի եւ առաքինի մաքուր վարքի:
36 Տե՛ս Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենա ողորգութեան եւ այլ երկասիրութիւնը, Անթիլիաս, 2003, էջ 681-724:
37 Տե՛ս Գրիգոր սուրբ վարդապետի եւ երանաւետ ճգնաւորի համառօտ խրատաբանութիւնը ողիղ հաւատի եւ մաքուր ու առաքինի վարքի մասին, Նոր Զուղա, 2003:
38 Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ, էջ 1022-1084:
39 Մ. Չամչեան, ԱԶ. աշխ., էջ 853:

ըլլայ: Նարեկացուն չըլլալուն զլխաւոր ապացոյցն ալ այն կ'երեւնայ՝ զոր Վարդան անուամբ՝ եղբայր չունէր Նարեկացին»⁴⁰: Նոյն կարծիքն է պնդում նաեւ Ե. Դուրեանը⁴¹:

Մերծելով Գ. Զարբհանալեանի եւ Ե. Դուրեանի այս կարծիքները՝ Բ. Սարգիսեանը փորձում է հիմնաւորել, թէ Նարեկացին Վարդան անունով եղբայր է ունեցել, որի համար դիմում է Յ. Նալեանի «Իւրոյ Հարազատի եւ արեւակցի» մեկնաբանութեան բառարանային բացատրութեանը, ըստ որի՝ «Հարազատ» նշանակում է «եղբայր համահայր», ուստի եզրակացնում է, թէ Վարդան դիւանադպիրը եղել է Գր. Նարեկացու եղբայրը: Հարկ է փաստել, սակայն, որ Բ. Սարգիսեանը ձեռագրական կամ պատմական որեւէ փաստ չի ունեցել այս հանգամանքը հիմնաւորելու համար: Այդ առումով իրաւացի է Թ. Մինասեանը, երբ գրում է, թէ «Հարազատ» նշանակում էր նաեւ «հոգեւոր եղբայր»՝ ըստ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի, ուստի «Գրիգոր Նարեկացին եւ Վարդան դիւանադպիրը կարող էին լինել հոգեւոր եղբայրներ»⁴², ապա եւ շատ տեղին աւելացնում, որ «պատմագրական որեւէ աղբիւր չի հաստատում նաեւ այն փաստը, որ Սենեքերիմ Արծրունին Վարդան անունով դիւանադպիր է ունեցել»⁴³:

Նշենք նաեւ, որ Մ. Օրմանեանը Նարեկացուն նուիրում ձատուածում գրում է, թէ խնդրոյ առարկայ խրատի «հեղինակութեան ստուգութիւն ճշդելը մատենագրութեամբ զբաղողներուն կը թողունք»⁴⁴:

Ն. Պողարեանն առանց վարանման այս խրատը զետեղել է Գր. Սկեւոացու եր-

կերի շարքում՝ թերեւս հիմնուելով այն փաստի վրայ, որ նոյն Վարդան դիւանադպիր խնդրանքով Գր. Սկեւոացին գրել է նաեւ «Բան Գովեստի Ս. Կուսին Մարիամու» ներբողը⁴⁵:

Յ. Անասեանը Գրիգոր Սկեւոացի բառայօդուածում պարզորոշ գրում է. «Այս գործը թիւրիմացաբար վերագրուել է Գրիգոր Նարեկացուն»⁴⁶:

Ս. Ստամբուլցեանը, աշխարհաբարի փոխադրելով եւ վերապահութեամբ տպագրելով այն Գր. Նարեկացու անունով, միաժամանակ գրում է. «Այսուամենայնիւ տակաւին անորոշ է դրանց հեղինակային պատկանելութիւնը: Հաւասար հաւանականութեամբ խրատները կարելի է վերագրել ԺԲ-ԺԳ դդ. նշանաւոր մատենագիր Գրիգոր վարդապետ Սկեւոացուն, քանզի ձեռագրերում դրանք հանդիպում են ե՛ւ Նարեկացու, ե՛ւ Սկեւոացու անուններով»⁴⁷:

Իսկ Ս. Ստամբուլցեանի փոխադրութեան ամբողջական տպագրութեան առաջաբանում Յ. Քէօսէեանն իրաւամբ այն չի դիտում որպէս Գր. Նարեկացու ստեղծագործութիւն եւ, հետեւելով Ն. Պողարեանին, խրատը համարում է Գրիգոր Սկեւոացունը⁴⁸:

Աւելին՝ 2003 թ. Պ. Խաչատրեանը եւ Յ. Քէօսէեանը խրատը տպագրել են Գրիգոր մենաւորի անունով, ինչի առնչութեամբ Պ. Խաչատրեանը գրում է. «Խրատական բովանդակութեամբ այս գործը, որը ճշմարիտ հաւատի եւ քրիստոնեայի առաքինի վարքի սկզբունքների շարադրանքն է՝ հայ առաքելական եկեղեցու տեսանկիւնից, ձեռագրերում պահպանուել է իբրեւ «յոգներանեան մենաւոր» Գրիգորի ստեղ-

45 Ն. Պողարեան, ԱԶ. աշխ., էջ 273:
46 Յ. Անասեան, ԱԶ. աշխ., էջ 284:
47 Սք. Գրիգոր Նարեկացի, Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին, էջ 165:
48 Տե՛ս Գրիգոր Վարդապետ, Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինի վարքի մասին:

40 Գ. Զարբհանալեան, ԱԶ. աշխ., էջ 447:
41 Տե՛ս Ե. Դուրեան, ԱԶ. աշխ., էջ 172:
42 Թ. Մինասեան, ԱԶ. աշխ., էջ 30:
43 Նոյն տեղում:
44 Մ. Օրմանեան, ԱԶ. աշխ., էջ 1379:

ծագործութիւն՝ գրուած իր իսկ հարազատի՝ Վարդան դիւանադպիր խնդրանքով»⁴⁹:

Աւելի վաղ այս խրատի շուրջ պատմաբանասիրական մի արժէքաւոր քննութեամբ հանդէս էր եկել նաեւ Պ. Խաչատրեանը՝ նախ «Բազմավէպում»⁵⁰, ապա եւ «Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը» գրքում⁵¹ ցոյց տալով, որ այն չի կարող Գրիգոր Նարեկացունը լինել եւ «առանց լուրջ հիմնաւորման է կապուել Նարեկացու անուան հետ: Իրականում այլ մատենագրի գործ է»⁵²:

Պ. Խաչատրեանը խրատի իրեն յայտնի 14 ձեռագրերի ուսումնասիրութեան արդիւնքում փաստում է, որ ըստ խորագրերի եւ ըստ հեղինակների վերագրման՝ «ձեռագրերը բաժանուում են 5 խմբի», որոնցից առաջինը՝ Հնագոյն ձեռագիրն, անհեղինակ է, երկրորդ խմբում իբրեւ հեղինակ յիշատակուում է Գրիգոր Սկեւոացին, երրորդում որպէս հեղինակ վկայուում է Գրիգոր Վարդապետը, չորրորդում՝ «յոգներանեան մենաւոր Գրիգորը», իսկ հինգերորդում՝ Գրիգոր Նարեկացին. սրանք ժէ դարի ձեռագրեր են:

Պ. Խաչատրեանը յստակ ներկայացնում է, որ ձեռագրական փաստերն ամենեւին չեն խօսում Գրիգոր Նարեկացուն խրատի հեղինակ համարողների օգտին:

Բնականաբար, այս շարադրանքում արդէն իսկ ակնյայտ է, որ հայագիտութեան մէջ (Գ. Զարբհանալեան, Ե. Դուրեան, Յ. Անասեան, Ն. Պողարեան, Ս. Ստամբուլցեան, Հ. Քէօսէեան, Պ. Խաչատրեան) հիմնաւորուել է այն տեսակէտը, թէ

49 Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 447:
50 Պ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացուն վերագրուած մի երկի հեղինակային պատկանելութեան մասին, էջ 437-449:
51 Պ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 137-150:
52 Նոյն տեղում, էջ 150:

խրատը Նարեկացունը չէ: Նշենք նաեւ, որ թէեւ 2002 թ. Նարեկ եպս. Ալեմէզեանը «Խրատը» տպագրում է Նարեկացու անունով, սակայն գրում է. «Ս. Գրիգոր Նարեկացիի անունով հրատարակուած եւ անոր գրիչին վերագրուած «Խրատ»ը բաւական խնդրայարոյց է: Շատ քիչ բան ըսուած է այս մասին եւ ո՛չ մէկ մատենագրական քննական յստակ ու վերջնական կարծիք արտայայտուած է այս գծով»⁵³, իսկ գրքի եզրակացութեան մէջ երկրորդում է. «...կարելի չէր վերջնական, նոյնիսկ ոչ-հանգամանաւոր, վճիռ տալ «Խրատ»ին հեղինակային պատկանելութեան մասին»⁵⁴:

Սակայն 2004 թ. Հ. Միրզոյեանը հանդէս է գալիս «Գրիգոր Նարեկացու գրական ժառանգութեան հարցի շուրջ» յօդուածով եւ, դիմելով հերմենեւտիկայի մեթոդին, փորձում է խրատը համարել Գրիգոր Նարեկացունը: Փաստօրէն, մի կողմ թողնելով ձեռագրական համոզիչ փաստերը, Հ. Միրզոյեանը ընտրում է Նարեկացու երկերի եւ այս խրատի բովանդակութեան համեմատութեան մեթոդը, որի արդիւնքում յանգում է ոչ ճիշտ եզրակացութեան: Այդ մեթոդով խրատը կարելի է համեմատել նաեւ միջնադարեան այլ քրիստոնեայ վարդապետների թողած գրական ժառանգութեան հետ եւ յանգել համանման եզրակացութեան: Հարցն այն է, որ խնդրոյ առարկայ խրատը «ճշմարիտ հաւատի եւ քրիստոնեայի առաքինի վարքի սկզբունքների» բարոյախրատական մի շարք է, ուստի նրա հետ նմանողութեան եզրեր միջնադարեան մատենագրութեան մէջ կարող են ունենալ շատ ու շատ երկեր: Պարզ է, որ Հ. Միրզոյեանն առաջնորդուել է սխալ մեթոդաբանութեամբ:

Միւս մեթոդը, որ նախընտրել է փիլիսոփայ Հ. Միրզոյեանը, լեզուաբանական

53 Սք. Գրիգոր Նարեկացի, Խրատ ուղիղ հաւատքի եւ առաքինի մարտ վարքի, էջ 143:
54 Նոյն տեղում, էջ 182:

մեթոդն է, որը եւս ցանկալի արդիւնք չի տուել, ինչի մասին փաստուում է լեզուաբան, գրաբարագէտ Գ. Մանուկեանի երկու գրախօսութիւններում⁵⁵:

Նշենք նաեւ, որ պատմաբանասիրական առումով եւս Հ. Միրզոյեանի առաջադրած Հարցերը մտնում են փակուղի: Այսպէս՝ իր յօդուածում Հ. Միրզոյեանը ենթադրում է, որ Գրիգոր Նարեկացուն Արծրունեաց Գուրգէն-Խաչիկ թագաւորը չէր ճանաչի, եթէ նա գրած չլինէր այս խրատը. «Գուրգէն-Խաչիկը Գրիգոր Նարեկացուն կարող էր ճանաչել Երգ երգոցի մեկնութիւնից (977 թ.) առնուազն 1-2 տարի առաջ ստեղծած գրական արժէքաւոր երկի կամ երկերի հիման վրայ: Այստեղից ենթադրւում է, որ Խրատը ոչ միայն պատկանում է Նարեկացու գրչին, այլեւ գրուել է Մեկնութիւնից առաջ, որին ինչ-որ ճանապարհով ծանօթացել է Գուրգէն-Խաչիկ Արծրունին, հիացել հեղինակի մտածողութեամբ, ուստի, որպէս աստուածասէր քաղաքական գործիչ, ցանկացել է նոյն ոգով մեկնուած տեսնել Երգ երգոցը եւ պատուիրել է Նարեկացուն իրականացնել իր այդ ցանկութիւնը»⁵⁶: Ուրեմն, ըստ Հ. Միրզոյեանի, Նարեկացին եղել է մօտ 30 տարեկան, երբ գրել է «Խրատը», մինչդեռ Հ. Թամրազեանն այլ առիթով իրաւացիորէն նկատել է, որ «նշանաւոր մատենագիրը կամ վարդապետը կարող էր աղօթքի կանոնների եւ սահմանումների մասին խրատ գրել»⁵⁷: Բացի այս՝ Հ. Միրզոյեանն անտեսում է այն, որ Յակոբ Մպատեցին Նարեկացու հօր դէմ գրուած թղթում ակնարկում է, թէ Խոսրովը դիմել է թագաւորին. «Եւ դարձեալ, թէ եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւազ, կամ ո՛վ եւ իցէ՛ արտաքոյ զկամս, որ գաւառին եպիսկոպոսն իցէ, եւ կամ մայրաքաղաքացն իցէ, եւ դիմեսցէ առ թագաւորն, զայնպիսին ցոյց արասցեն, եւ ընկեսցեն, եւ մերժեսցեն ոչ միայն ի հաւասարութենէ, այլ եւ ի պատուոյն, եւս զոր ունէր, զի իբր եւ ձանձրացուցանել կամեցաւ զաստուածասէր թագաւորին մերոյ զլսելիս արտաքոյ զկարգ եկեղեցւոյ, ապա թէ յարկ ինչ իցէ իրաց եւ ոչ առ թագաւորն դիմել, գործեսցէ խորհրդով եւ կամաւք ըստ իշխանութեանն, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն իցէ...»⁵⁸: Բնականաբար, Խոսրովն Անանիա կաթողիկոսի դէմ ելել է Արծրունի թագաւորի՝ Դերենիկ-Աշոտի (943-959) հովանաւորութեամբ, ինչը նկատել է նաեւ Ա. Բողոյեանը. «Մոկաց աշխարհում գործող վանականը անհանդուրժելի է համարում եւ Նիկիայի ժողովի կանոններով մերժում է այն կեցուածքը, երբ հոգեւորականը փորձում է իրեն շահագրգռող որեւէ խնդիր լուծել ոչ թէ իրեն գերագահ հոգեւոր առաջնորդի միջոցով, այլ «դիմեսցէ առ թագաւորն»»⁵⁹:

Սա հաստատուում է նաեւ այն փաստով, որ Անանիա Մոկացին լքել է Վասպուրականը եւ Աբաս Բագրատունու (928-953) աջակցութեամբ 947-949 թթ. միջոցին Հայրապետական աթոռը Աղթամարից տեղափոխել Բագրատունիների թագաւորութիւն՝ Արգինա գիւղաքաղաք: Իսկ սրանից մակարերում է, որ Նարեկացուն պէտք է ճանաչէր նաեւ Արծրունի թագաւոր Դերենիկ-Աշոտի եղբոր՝ Ապուսահլ-Համագասպի (959-972) որդի Գուրգէն-Խաչիկ Արծրունին (991-1003): Խոսրովի՝ թագաւորին դի-

55 Տե՛ս Գ. Մանուկեան, Կարծեցեալ վերծանումներ Գրիգոր Նարեկացու «Մատենաճոռոցի տպագրութեան» բնագրում, «Համդէս ամսօրեայ», 2002, ԺԺԶ, թիւ 1-12, էջ 249-282, նաեւ Առնոյ, «Նարեկացու բառաշխարհը» հրատարակման քննական վերլուծութիւն, «Բանբեր Երեւանի համալսարանի», 2006, թիւ 1, էջ 84-94:
56 Հ. Միրզոյեան, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգութեան հարցի շուրջ, «Բանբեր Երեւանի համալսարանի», 2004, թիւ 1, էջ 71:
57 Մատենագիրը Հայոց, հտ. Ժ, Երեւան, 2011, էջ 1076:

58 Նոյն տեղում, էջ 306:
59 Տե՛ս Մատենագիրը Հայոց, հտ. Ժ, էջ 295:

մելու հանգամանքը, որը վկայել է Յակոբ Մպատեցին, բաւականին խօսուն փաստ է եւ գալիս է հաստատելու, որ Նարեկացու հայրը (հետեւաբար նաեւ՝ որդին) կապեր է ունեցել Արծրունի թագաւորների հետ, եւ ամենեւին էլ պարտադիր չէր, որ Նարեկացին որեւէ երկ գրած լինէր, որպէսզի ճանաչուէր Արծրունի Գուրգէն-Խաչիկի կողմից: Նարեկացին յայտնի մարդու որդի էր: Թէեւ Հայրը 977 թ. արդէն չկար, սակայն Նարեկացին գործում էր առաւել յայտնի մարդու՝ Անանիա Նարեկացու հովանուներքոյ: Բացի այդ, կաթողիկոսներ Անանիա Մոկացու (941/6-968) եւ Խաչիկ Արշարունու (973-992) բարեկամն էր:

Հերմենեւտիկայի մեթոդը, որը կիրառել է Հ. Միրզոյեանը, չի կարող պարզապէս ի չիք դարձնել ձեռագրական եւ պատմաբանասիրական փաստերը, որոնք աւելի զօրաւոր են, քան փիլիսոփայի կատարած տեքստաբանական համեմատութիւնները:

Մի խօսքով, մեթոդական այն սկզբունքները, որ ընտրել է Հ. Միրզոյեանը, չափազանց խոցելի են: Ստացւում է, որ խրատի հեղինակային պատկանելութիւնը հիմնաւորում է ոչ թէ ձեռագրական փաստերով, այլ երկերի բառապաշարի, ինչպէս նաեւ քրիստոնէական բարոյախօսութեան համընդհանուր նորմեր պարունակող տեքստերի համեմատութեամբ: Սակայն պիտի նշենք, որ քննարկուող յօդուածում Հ. Միրզոյեանը բարձրացնում է մի կարեւոր խնդիր՝ այս երկի գիտաքննական բնագրի ստեղծման անհրաժեշտութիւնը, ինչն ի կատար է ածուել յետագայում հէնց իր կողմից⁶⁰: Ցաւօք, այն կազմուել է ոչ բոլոր ձեռագրերի համեմատութեամբ⁶¹ եւ տպագրուել է ոչ ճիշտ տեղում՝ Գրիգոր Նարեկացու երկերի շարքում:

60 Տե՛ս Մատենագիրը Հայոց, հտ. ԺԲ, էջ 1022-1084:
61 Քննական բնագիրը կազմուել է ընդամենը 2 ձեռագրի եւ 4 տպագրի համեմատութեամբ,

Հ. Միրզոյեանի այս յօդուածի տպագրութիւնից յետոյ՝ 2004 թ., Հ. Թամրազեանը «Գրիգոր Նարեկացին եւ նորապատնականութիւնը» գրքում մի առանձին գլուխ է նուիրուել այս խրատին⁶², որը նոյնութեամբ տեղ է գտել նաեւ 2013 թ. տպագրուած «Գրիգոր Նարեկացին եւ Նարեկեան դպրոցը» գրքում⁶³: Հ. Թամրազեանը, ընդունելով Հ. Միրզոյեանի «առաւել հիմնաւորուած վարկած»-ը, շարունակում է այն լրացնել նոյն հերմենեւտիկայի մեթոդով՝ շեշտը դնելով նորապատնական բարոյագիտութեան եւ խնդրոյ առարկայ խրատի ընդհանրութիւնների վրայ, ինչն ինքնին ոչ թէ պատմաբանասիրական, այլ տեքստաբանական քննութիւն է՝ էկզեգետիկայի ուղղուածութեամբ: Սակայն իր գրքի 76-րդ էջում Հ. Թամրազեանը գրում է. «Այս խրատը աւանդաբար վերագրուել է Գրիգոր Նարեկացուն, չնայած նարեկացիագէտների մօտ տարակարծութիւնների տեղիք է տուել»: Ապա այս հաստատում յղուած 83-րդ ծանօթագրութեան մէջ⁶⁴ զարմանալիորէն խօսում է ոչ թէ խնդրոյ առարկայ խրատի, այլ մէկ ուրիշ վիճելի գործի՝ «Կարգ եւ կանոն աղօթից» խրատի մասին: Այսպէս՝ Հ. Թամրազեանը, նկատի ունենալով Պ. Խաչատրեանին, գրում է. «Նա բերում է խրատը պարունակող 18 ձեռագրերի ցանկը (XIV-XVIII դդ.), որոնցից 13-ում այն վերագրուած է Գրիգոր Նարեկացուն»⁶⁵:

Միայն ուշագիւր ընթերցողը կը նկատի, որ այստեղ խօսքը ոչ թէ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վա-

միւնչեռն Հ. Միրզոյեանիմ յայտնի են եղել տասից անէլի ձեռագրեր, որոնցում առկայ է խրատը:
62 Հ. Թամրազեան, Գրիգոր Նարեկացին եւ նորապատնականութիւնը, էջ 76-91:
63 Հ. Թամրազեան, Գրիգոր Նարեկացին եւ Նարեկեան դպրոցը, էջ 216-233:
64 Տե՛ս Առնոյ տեղում, էջ 396-401:
65 Նոյն տեղում, էջ 397:

րուց առաքինութեան» խրատի մասին է, այլ «Կարգ եւ կանոն աղօթից» երկի, քանզի է. Թամրազեանի յղած թիւ 2680 ձեռագրում (թերթ 260բ) հէնց վերջին երկի ձեռագիրն է: Համոզուելու համար յղում ենք ձեռագրի նկարագրութիւնը՝ ըստ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» գրքի. «260բ-3բ կարգ եւ կանոն աղաւթից, զոր խնդրեալ է ի հոգէկիր արանց՝ յուժեմնէ միայնացելոյ արթուն եւ զուարթուն հովուոյ Գրիգորի Նարեկացւոյ, որ եւ ցուցանէ նախադրութիւն բանիս, թէ ոչ համարի զանձն արժանի այսպիսի իրի, վասն այն զառաքելոյն ի մէջ առեալ՝ ղնէ սկիզբն կանովնիս պատմութեան եւ ոգէշահ խրատու – Առաքեալն Պաւղոս, անաւթն ընտրութեան... ննջեա՛ ի փառս նորա, որ է աւրհնեալ յաւիտեանս»⁶⁶:

Մի խօսքով, Հ. Թամրազեանի ծանօթագրութիւնը չի համապատասխանում իր յղմանը: Ի դէպ, Հ. Թամրազեանի այս նոյն շարադրանքը տեղ է գտել նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի ժ հատորում, այս անգամ՝ ճիշտ տեղում՝ Նարեկացուն վերագրուող «Կարգ եւ կանոն աղօթից» խրատի բնագրից առաջ⁶⁷, իսկ այդ հատորում մեր խնդրոյ առարկայ խրատի մասին Հ. Թամրազեանը գրում է. ««Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր առաքինութեան» եւ «Մեկնութիւն «Ո՛վ է դա»-ի ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ», ընդգրկուել են սոյն մատենաշարի՝ Գրիգոր Նարեկացու մատենագրութեանը նուիրուած հատորում: Դրա համար հիմք են հանդիսացել վերջին շրջանի ուսումնասիրութիւնները»⁶⁸: Ինչպէս պարզուում է

66 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բու. Ը, Երեւան, 2013, էջ 1137, նաեւ <http://www.matenadaran.am/ftp/VIIIvolume.htm> 12.01.2017:
 67 Տե՛ս Մատենագիրք Հայոց, Բու. Ժ, էջ 1073-1076:
 68 Նոյն տեղում, էջ 1017:

տողատակի յղումից, խօսքը Հ. Միրզոյեանի վերոյիշեալ յօդուածի և Հ. Թամրազեանի «Գրիգոր Նարեկացին եւ նորապատանականութիւնը» գրքի՝ խրատին նուիրուած հատուածի մասին է:

2006 թ. «Վարդան դիւանադարի ինքնութեան խնդրի շուրջ» յօդուած է հրատարակել Թ. Մինասեանը⁶⁹, սակայն վերջինս, ցաւօք, չի անդրադարձել Հ. Միրզոյեանի վերոյիշեալ յօդուածին եւ Հ. Թամրազեանի գրքին: Թ. Մինասեանը կատարել է ձեռագրական փաստերի քննութիւն, ինչպէս Պ. Խաչատրեանը, եւ յանգել է ճիշտ եզրակացութեան, այն է՝ սոյն խրատի հեղինակը Գրիգոր Նարեկացին լինել չի կարող: Ի դէպ, այս խրատի հեղինակի անուան առաջին վկայութիւնը ձեռագրերում կապուում է Գրիգոր Սկեւոացու հետ. դա, ինչպէս նկատել է Թ. Մինասեանը, թիւ 581 ձեռագիրն է՝ գրչագրուած 1371 թ., որից 20 տարի անց՝ 1391 թ. գրչագրուած թիւ 2178 ձեռագրում իբրեւ խրատի հեղինակ կրկին յիշատակուած է Գրիգոր Սկեւոացին, ինչի մասին գրել է նաեւ Պ. Խաչատրեանը:

Յիշեալ հնագոյն թիւ 581 ձեռագրի նկարագրութեան մէջ՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի» Բ հատորում, սոյն խրատի հեղինակ նշուած է Սկեւոացին. «265ա-314բ Հէ. Սրբոյ վարդապետի յօքներանեան մենաւորի Գրիգորի [Սկեւոացւոյ] համառուտիւք Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան, ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադարի - Տէրունեանն հաւանեալ խրատու...»⁷⁰:

Փաստենք, որ թէեւ Թ. Մինասեանը չի անդրադարձել Ս. Ստամբուլցեանի, Յ. Բէօսէեանի, Հ. Միրզոյեանի կարծիքներին, սակայն ընդհանուր առմամբ նրա յօդուածը

69 Թ. Մինասեան, նշ. աշխ., էջ 27-33:
 70 <http://www.matenadaran.am/ftp/IIvolume.htm>, 11.01.2017:

լուրջ պատմաբանասիրական քննութիւն է, որը գալիս է կրկին հիմնաւորապէս հերքելու քննարկուող խրատը Գրիգոր Նարեկացուն վերագրելու անհիմն վարկածը:

Իր հերթին Հ. Միրզոյեանը, տեղեակ չլինելով իրենից առաջ ձեռագրական քննութիւն կատարող Թ. Մինասեանի աշխատութեանը, իր վերոյիշեալ յօդուածը գետեղում է «Նարեկացիական հետազոտութիւններ» գրքում⁷¹, ապա 2011 թ. «Մատենագիրք Հայոց»-ում ձեռագրական փաստերը փորձում է ներկայացնել իբրեւ նոր քննութիւն, մինչդեռ Պ. Խաչատրեանը, ապա նաեւ Թ. Մինասեանն արդէն իսկ ձեռագրական փաստերով հիմնաւորել են, որ այս խրատը չի կարող Գր. Նարեկացունը լինել: Կրկին փաստենք՝ Թ. Մինասեանի ձեռագրական քննութիւնը զարմանալիօրէն դուրս է մնացել «Մատենագիրք Հայոց»-ի ժԲ հատորում այս խրատն անհիմն կերպով Գրիգոր Նարեկացուն վերագրող Հ. Միրզոյեանի ուշադրութիւնից, մինչդեռ այնպիսի հեղինակաւոր մատենաշար, ինչպիսին «Մատենագիրք Հայոց»-ն է, պարտաւոր է հիմնուել հայագիտութեան մէջ եղած բոլոր կարծիքների համակողմանի քննութեան վրայ, ինչը երբեմն խախտուում է եւ, ցաւօք, ոչ միայն այս դէպքում:

«Մատենագիրք Հայոց»-ում Հ. Միրզոյեանն առաջնորդուում է նոյն խոցելի մեթոդաբանութեամբ: Քանի որ խրատում գործածուել է «գտիչ» բառը, իսկ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում այն վկայուում է առաջին անգամ Նարեկացու, ապա Համբրոնացու կողմից,

71 Հ. Միրզոյեան, Նարեկացիագիտական հետազոտութիւններ: Ս. Զաքարեանը, որպէս սոյն գրքի գրախօսութիւն, գրել է գովասանական մի ճառախօսութիւն, որտեղ ոչ մի ամսամասայնութիւն չկայ գրքում տեղ գտած անընդունելի վարկածների կամ գէթ մէկ թերութեան վերաբերեալ (տե՛ս Ս. Զաքարեան, Նարեկացիագիտական արժէքաւոր հետազոտութիւն,- «Բանբեր Երեւանի համալսարանի», 2010, թիւ 1, էջ 66-72):

ուստի, ըստ Հ. Միրզոյեանի, «մէն միայն գտիչ բառը բաւական է՝ ասելու համար, որ իսկապէս համեմատուող հատուածների հեղինակը նոյն ինքը Գրիգոր Նարեկացին է»⁷²: Ոչինչ, որ ԺԴ դարի հնագոյն երկու ձեռագրում խրատը համարուում է Գրիգոր Սկեւոացունը, միայն «գտիչ» բառի օգտագործումը բաւական է պրոֆեսոր Հ. Միրզոյեանին՝ ասելու, որ դրա հեղինակը Նարեկացին է, ասես Սկեւոացին կամ, օրինակ, Եզնիկ Կողբացին չէին կարող օգտագործել այդ բառը: Բանն այնտեղ է հասնում, որ Հ. Միրզոյեանը նոյնիսկ յայտարարում է, որ «գտիչ» բառը Նարեկացին առաջին անգամ գործածել է «Նորատում», ապա նոր միայն «Մատենում»: Յարգարժան պրոֆեսորին պարզապէս տեղեկացնենք, որ «գտիչ» բառը Նարեկացու նորաբանութիւնը չէ, եւ ամենեւին էլ անթերի չէ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» մեծարժէք բառարանը, որն այս դէպքում իսկապէս բացթողում ունի: «Գտիչ» բառը վկայուած է դեռեւս Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» մէջ. այսպէս՝ «եւ նոյն ինքն ձեզ գտիչ պարգեւեցաւ»⁷³: Յոգնակի մի կիրառութիւն էլ հանդիպում է Եզնիկ Կողբացու մօտ՝ «Պարսից քէշին գտիչք»⁷⁴:

Հ. Միրզոյեանի գիտական մեթոդաբանութիւնը պարզ է, նրա համար ձեռագրական փաստերը երկրորդական նշանակութիւն ունեն, ինչպէս երկրորդական է համարում Վարդան դիւանադարի անձի եւ ապրած ժամանակի պատմաբանասիրական քննութիւնը, որը չափազանց կարեւորել են իր կողմից այնքան շատ գործածուած բառարանի հեղինակները՝ Գ. Աւետիքեանը, Խ. Սիւրմէլեանը, Մ. Աւգերեանը, նրանց նախանշած ճանապարհով՝ Պ. Խաչատրեանը, յետագայում նաեւ՝ Թ. Մինասեանը:

72 Մատենագիրք Հայոց, Բու. ԺԲ, էջ 1016:
 73 Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, Երեւան, 1983, էջ 460:
 74 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Ա, իր:

Ինչպէս արդէն վերեւում նշել ենք, երեք մեծ հայկաբաններն այս երկի հեղինակի որոշման հարցում կարեւոր են համարել, թէ ով է եւ որ ժամանակի գործիչ է Վարդան դիւանադպիրը: Հէնց այս առողջ մօտեցմամբ էլ հարցը փորձել են պարզաբանել անուանի նարեկացիագէտ Պ. Խաչատրեանը եւ Գրիգոր Սիււնացու կեանքի ու գործի ուսումնասիրող, ձեռագրագէտ Թ. Մինասեանը, որոնք թէեւ խրատի հեղինակ Գրիգորի եւ պատուիրատու Վարդան դիւանադպիր ինքնութեան հարցում յանգել են տարբեր եզրակացութիւնների, սակայն բացառել են խրատի՝ Գրիգոր Նարեկացունը լինելու վարկածը: Մինչդեռ Հ. Միրզոյեանը պատմական մեթոդով կատարուած այդ քննութեան մասին գրում է. «Խրատի հեղինակային հարցը պարզելու համար նրանք կարեւորել են յատկապէս Վարդան դիւանադպիր անձնաւորութեան եւ ապրած ժամանակի հետ կապուած խնդիրների լուծումը, որը թէեւ ունի երկրորդական նշանակութիւն, բայց ոմանք ուշադրութիւն են դարձրել հէնց դրա վրայ եւ ըստ այդմ՝ ընթացել սխալ ճանապարհով»⁷⁵: Եւ սա այն դէպքում, երբ խրատի մէջ հեղինակը դիմում է իր սիրելի պատուիրատուին՝ Վարդան դիւանադպիրին. «Իսկ ինձ առ քեզ, ո՛վ սիրեցեալ անձին իմոյ, կրկին եւ ոչ մէկին է հարկաւորութիւն տալոյ: Մի՛ ըստ վերագոյն ցուցեալ Տեառն հրամանին, որ ամենայն խնդրողի աւրինադրէ գտալն, եւ երկրորդ՝ ըստ բնաւոր արեանառու մերձաւորութեան եւ սննդակցութեան»⁷⁶, որից պարզուում է, որ Վարդան դիւանադպիրը հեղինակի արեանակից մերձաւորն ու սննդակիցն է՝ հարազատ եղբայրը: Իսկ Գրիգոր Նարեկացին, ինչպէս նկատել էին դեռեւս ԺԹ դարի հայագէտները, Վարդան անունով եղբայր էի ունեցել:

75 Մատենագիրք Հայոց, Բն. ԺԲ, էջ 1012:
76 Նոյն տեղում, էջ 1023:


Մի խօսքով, Հ. Միրզոյեանի վարկածը չի բխում ձեռագրական փաստերից: Աւելին՝ նա անտեսում է իրենից առաջ կատարուած պատմաբանասիրական քննութիւնները՝ յանգելով կանխակալ եզրակացութեան:

Աւելացնենք, որ Հ. Միրզոյեանը (թեւեւ անտեղեակ լինելով) «Խրատի» համար կազմած մատենագիտութեան մէջ չի ներառել ինչպէս դրա 1954 թ. Ստամբուլում հրատարակուած տարբերակը, այնպէս էլ Թ. Մինասեանի յօդուածը, նաեւ՝ Պ. Խաչատրեանի եւ Հ. Քօսէեանի կազմած «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան» ժողովածուն:

Այսպիսով՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ ձեռագրական փաստերն ու հայագիտութեան մէջ եղած հիմնաւոր ուսումնասիրութիւնները, երկի պարզ ու մատչելի գրաբարը եւ պատմական վկայութիւնները, «Խրատի» յորդորական բնոյթը, որին դժուար թէ դիմէր դեռեւս 30 տարեկան չդարձած Գրիգոր Նարեկացին, ինչպէս նաեւ խրատի պատուիրատու Վարդան դիւանադպիր՝ հեղինակի եղբայրը լինելու հանգամանքը վկայում են, որ «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» երկը Գրիգոր Նարեկացու գրչի արդիւնքը է: Ուստի առաւել քան տարօրինակ է, երբ բանասիրական նման տարակարծութիւնների պարագայում «Մատենագիրք Հայոց» համբաւաւոր մատենաշարում հանդէս է բերուում նման անզգոյշ մօտեցում գիտական լուրջ խնդրի հանդէպ, եւ վիճելի համարուող խրատը սպազրուում է Գրիգոր Նարեկացու երկերի շարքում՝ որպէս նրա գրական երախայրիք:

Matenadaran collection of Persian language manuscripts

Kristine Kostikyan



The Matenadaran collection of Persian, Arabic and Turkish language manuscripts was achieved mainly through acquisitions and individual or institutional donations. The original core of the Persian section consisted of two hundred and one pieces was the collection kept in the Holy Etchmiadzin library around 1880s. In 1903 this collection was enriched with 30 manuscripts of Khachik Vartapet Dadian, an outstanding Armenian clergyman, who had gathered the manuscripts in the Armenian villages of Qarabagh and Iranian Azerbaijan. Another large portion of the

manuscripts were collected after Armenian Genocide in 1915 and brought to Holy Etchmiadzin from the devastated Armenian territories, among them 35 works written in Arabic script.

When the Matenadaran opened in 1959 as Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts, the oriental manuscripts' collection was enriched by former holdings of Myasnikyan State Public Library, the Lazarev Institute of Oriental languages in Moscow¹ and Yerevan State University collections.

A succession of donors, such as H. Hazarian, V. Salatian, A. Aivazian, V. Samuelian, H. Edgarian, A. Hovhannisian, etc. increased and improved the quality of the collection from 446 volumes in 1958² to 2214 in 2006³.

After a recent significant and generous contribution of over four hundred manuscripts in Arabic script made by M. Minasian, the Matenadaran collection of Oriental manuscripts now contains a total of 2715 volumes of which 450 contain works in Persian. This

1 Established in 1815 by Joachim, the grandson of Khoja Ghazar (Lazar) from New Julfa of Isfahan.
2 Yeghanyan O., Zeitunian A., Antabian P., Ts'uts'ak dzeragrats' Mashtots'i anvan Matenadaran (Catalogue of [Armenian] Manuscripts of Mashtots Matenadaran), vol. I, Yerevan, 1965, p. 190 (in Armenian).
3 Ter-Vardanyan G., Matenadaran dzeragreri ache 1993-2006 t't' (The growth of the manuscripts of the Matenadaran in 1993-2006), Bulletin of Matenadaran, 17, Yerevan, 2006, p. 343 (in Armenian).